

ուր Արարայի կամաւորներու յուշարձանէն քանի մը քայլ միայն սաղին, առ երբ Զէյթունի պատմագիր Մնացական Պատուելիի հողակոյտին, ինչպէս ինքը պատուիրեր էր, պատրաստուեր էր իր հուսկ հանգիստը: — Աւելի յուշիչ եղաւ վերջին պահը. երբ զագաղը գերեզման կ'իջեցնէին ամենուն արցունքներուն առջեւ: Զերգուեցան ձկն փող զարկիները և ոչ հիւսկ զո՞վ խնդրեալը: Բայց յիշեցուեցաւ այս վերջինին վերջին երկողը: «Խաչ մը տնկէ՛ վրաս, ու զուն ուրախ լուրեր տա՛ր ի Զէյթունը. ու ամէնքը, վարդապետք, աշակերտք, և ժողովուրդ, Ս. Պատրիարքին ազգանշանին վրայ իր բաց գերեզմանին շուրջը երգեցին հոգի վարդանը և Աւետարանն ու խաչ առին, տարին յերկինք բարձրացուցերը: Երկու դամբանականներ ալ իր հայրենակիցներէն՝ ու յաւախանական վարադոյրը ձածկեր էր արդէն սուրբը ամէնքէն:

Երջանիկ եղաւ իր հոգին, սուրբ քաջերուն նուիրուած՝ որը իջնելով իր մարմնոյն ի գերեզման, ինչպէս իր իւզն էր եղած: Իր սուգովը համագրաւուած, Երուսաղէմի հայութիւնը չկրցաւ այս տարի ըստ սովորականին կատարել վարդանանց տօնը: Բայց քաջ վարդապետին յուշարկաւորութիւնը, իրեն պանծացում հայրենասէր հոգեւորականէ մը անձնաւորուած գաղափարի, ամէնուս համար եղաւ կրկնապէս նշանակալից տօն մը, քաջութեան և սրբութեան, վիշտի և մխիթարութեան յոյզերով և անմեռ յիշատակներու ոգեկոչութեամբ խորհրդաւոր...

Օրհնութիւն իր անուան և յիշատակին:

ԱԹՈՒ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ՅԱԿՈԲԱՆՆՑ

ԵՐՈՒՍԱՂԷՄ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒԹՅՈՒՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Համաձայն կարգադրութեանց, որոնք մանրամասնուած են Ս. Արքուստ Սիմոն Պաւսօնաբերի ներկայ սաւուոյ Ապրիլի բիւլին իբր Յաւելուած հրատարակուած Կանոնագրութեան մէջ, պահել ունինք բացուած յայտարարելու «Մրցոց Քարգանակաց — Դուրեան Դրական Մրցանակ» ի ներքոյ երկամեակի Տարեբացը:

Մասնակցիլ փափաղողներ կը հրաւիրուին ամենէն ուր՝ մինչեւ յառաջիկայ 1938 տարւոյ Ապրիլ ամսոյ վերջը, իրենց գործերը նամակաւ յիւլ Ս. Արքուստ Ամենապաթիւ Մրբազան Պաշտօնաւ Հօր, մեքենագրեալներ՝ երկուսական, իսկ ձեռագիրները մէկ մէկ օրինակ:

Այս Ներքոյ երկամեակի Շրջանի համար, ըստ է. յօդուածի նոյն Կանոնագրութեան, մասնակցողներն ազատ բողոքուած են իրենք ընտելու իրենց նիւթը. բաւական է որ Ս. յօդուածի մէջ նշանակուած ընդհանուր գիծերու տշանակին մէջ լինի այն:

Ի դիմաց Ուսումնական Խորհրդոյ Ս. Արքուստ

Ասեմայրի

Ասեմայրի

ԵՂԻՇԷ ՎՐԻ. ՏԷՐՏԷՐԵԱՆ ՄԿՐՏԻՉ ԱՐՔԵՊՈ. ԱՂԱԽՆՈՒՆԻ

28 Մարտ 1937, Երուսաղիմ